ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔԸ, ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Մեռի Դանիելյան

Համլետ Խաչյան
Տիգրան Բումաստյան
Գոռ Օսիպով
Նանե Բաբայան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ

Գրիգոր Լուսավորչի արձանը Վատիկանում

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում տեղի է ունեցել 301 թվականին: Դա հայ ժողովրդի պատմության մեջ մի դարակազմիկ իրադարձություն էր:

Առաջին դարում հայոց իշխանները, թագավորները հեթանոսներ էին և թշնամաբար էին տրամադրված քրիստոնեության նկատմամբ, քանի որ այն սպառնում էր իրենց համար սովորական դարձած կենցաղին և կարգերին: Չնայած այդ հանգամանքին՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, ըստ հետագա շրջանի հայ պատմագիրների, առաջին դարում սկսում են քրիստոնեություն տարածել Հայաստանում: Առաքյալների շնորհիվ քրիստոնեությունը սկսում է տարածվել Հայաստանի տարբեր հատվածներում: Նրանք բազում մարդկանց են մկրտում՝ թե՛ ռամիկների, շինականների, արհեստավորների ու առևտրականների, թե՛ իշխանական ընտանիքների ներկայացուցիչների: Վերջիններիս շնորհիվ քրիստոնեությունն ավելի է տարածվում Հայաստանում:

Չնայած դրան, երկրի կենտրոնական իշխանությունը դեռ հեթանոսական հավատալիքների կրող էր: Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, փաստորեն, առաջին դարում հիմնադրում են հայոց եկեղեցին, ինչի շնորհիվ էլ այն կոչվում է առաքելական:

Թադեոսն ու Բարդուղիմեոսը նահատակվել են Հայաստանում, նրանց նահատակության վայրերում կառուցվելեն եկեղեցիներ: Ըստ ավանդության, երբ Թադեոս առաքյալը գալիս է հայոց Եդեսիա քաղաքը, նրան ուղեկցում են Աբգար V-ի մոտ: Տեսնելով Թադեոսին՝ Աբգարն ուրախանում է, քանի որ հասկանում է, որ նա Քրիստոսի խոստացած բժիշկն է, որ եկել է իրեն բժշկելու: Թադեոսի քարոզի ժամանակ Աբգարը հավատքով է լցվում և հրաշքով բժշկվում իր հիվանդությունից: Աբգար թագավորը շատ թանկարժեք նվերներ է ընծայում Թադեոսին, սակայն նա մերժում է և փոխարենը խնդրում Աբգարին թույլ տալ իրեն քրիստոնեություն քարոզել Եդեսիայում: Քրիստոնեությունը հաստատվում է Եդեսիայում. իշխաններ ու իշխանուհիներ, հասարակ մարդիկ խմբերով քրիստոնյա են դառնում, եկեղեցիներ են կառուցվում, և ավետարանը զորանում է Եդեսիայի մեջ:

I-III դարերի ընթացքում Մեծ Հայքի թագավորությունը հեթանոսական էր և չէր նպաստում ժողովրդի քրիստոնյա դառնալու գործին:

Համաձայն 5-րդ դարի հայ պատմիչների, 287 թվականին Տրդատ 3-րդ թագավորը ժամանում է Հայաստան, իր հոր գահը հետ վերցնելու նպատակով: Երիզ տեղանքում նա հեթանոս Անահիտ աստվածուհու տաճարում զոհաբերություն է անում: Նրա շրջապատից Գրիգորը, որն արդեն քրիստոնեություն էր ընդունել, հրաժարվում է զոհ մատուցել հեթանոս աստվածուհուն: Տրդատը միաժամանակ տեղեկացվում է, որ Գրիգորը, իր հորը, Խոսրով թագավորին սպանողի որդին է: Գրիգորին բանտարկում են Արտաշատի զնդանում, որը նախատեսված էր մահապարտների համար, նա այնտեղ անցնկացնում է 13 տարի: Տրդատը հրամայում է Հայաստանում գտնվող քրիստոնյաներին կապած արքունիք բերել և նրանց ունեցվածքը բռնագրավել և մահապատիժ է սահմանում քրիստոնյաներին թաքցնողների համար:

Խոր Վիրապից դուրս գալուց հետո Գրիգորը սկսում է քրիստոնեության քարոզչությունը Հայաստանում: Ս. Գրիգորի կոչով սկսում են կառուցել Հռիփսիմյան կույսերի վկայարաններ: Ըստ պատմիչ Ագաթանգեղոսի Ազատ Մասիսի գագաթից Տրդատն իր թիկունքին ութ մեծ քար է տեղափոխում և տեղադրում Հռիփսիմյան կույսերի վկայարանների հիմքում:

Ըստ ավանդության՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքում երևացել է Միածնի՝ Քրիստոսի իջած տեղը, որտեղ և կանգնեցվել է փրկչական խաչի նշանը: Այստեղից էլ ծագել է Էջմիածին («Միածնի իջած վայր») անունը:

Իրավիճակը փոխվում է, Տրդատ III-ի օրոք (287-330թթ): Նրա գահակալությունն ամրապնդվում է 298 թ. կնքված Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով, որով ավարտվում է նաև հռոմեա-պարսկական հերթական պատերազմը: Իր իշխանության սկզբում Տրդատ III-ը նույնպես թշնամաբար էր տրամադրված քրիստոնեության և քրիստոնյաների հանդեպ, սակայն, կարճ ժամանակ անց, ամեն ինչ փոխվում է: 300թ. Հռոմից Հայաստան են գալիս քրիստոնյա միանձնուհիներ: Ճանապարհին միանձնուհիներից շատերը հեռանում են այլ երկրներ, տարբեր ժողովուրդների շրջանում տարածում քրիստոնեական վարդապետությունը, նրանցից շատերը նահատակվում են հեթանոսների ձեռքով կամ ճանապարհի փորձությունների զոհը դառնում: Դիոկղետիանոսի հետապնդումներից փրկված մենակյաց կույսերի մի խումբ՝ ավելի քան երեք տասնյակ կուսակրոն աղջիկներ, որոնց թվում էին նաև Գայանեն և Հռիփսիմեն, հասնում է Հայաստան՝ բնակություն հաստատելով Վաղարշապատ քաղաքի մոտակայքում: Շուտով Դիոկղետիանոս կայսրն իմանում է, որ հեռացած աղջիկները, որոնց թվում էր նաև Հռիփսիմեն, անցել են Հայաստան, և նամակ է գրում հայոց Տրդատ արքային: Դիոկղետիանոսն իր նամակում տեղեկացնում է մենակյաց կույսերի՝ Հայաստանում գտնվելու և Հռիփսիմեի մասին, ինչպես նաև ասում, որ աղջիկներին հայտնաբերելու դեպքում Տրդատը կարող է նրանց ետ ուղարկել Հռոմ կամ վարվել այնպես, ինչպես կցանկանա: Իմանալով այս մասին՝ Տրդատը շուտով հայտնաբերում է միանձնուհիներին, որոնց նաև անվանում են՝ Հռիփսիմյան հավաքական անունով, և հրամայում է Հռիփսիմեին ամենայն պատվով ու ընծաներով բերել իր մոտ: Տրդատը պահանջում է Հռիփսիմեից

դառնալ իր կինը, սակայն մերժում է ստանում: Այդժամ նա հրամայում է բերել նաև Գայանեին, որպեսզի նա համոզի Հռիփսիմեին հնազանդվել իրեն: Սակայն Գայանեն, ընդհակառակը, հորդորում և քաջալերում է իր սանին՝ Հռիփսիմեին, անխախտ պահել Աստծու առաջ արված ուխտը: Այս ամենը տեղի է ունենում Տրդատ արքայի և պալատականների ներկայությամբ: Նրանք, ովքեր հասկանում էին հռոմեացիների լեզուն, բացատրում են Տրդատին, որ Գայանեն արքայի ասածին հակառակ խորհուրդներ է տալիս Հռիփսիմեին: Տրդատը բարկանալով՝ ցանկանում է բռնությամբ հնազանդեցնել Հռիփսիմեին, սակայն չի հաջողում, դեռ ավելին՝ Հռիփսիմեն կարողանում է հեռանալ պալատից: Այդ գիշեր Տրդատի ուղարկած դահիճները տանջամահ են անում Հռիփսիմեին և նրա ընկերուհիներին, հաջորդ օրը նույն ճակատագրին են արժանանումնաև Գայանեն ու ևս երկու միանձնուհի: Հռիփսիմյան կույսերի նահատակությունը քրիստոնեական քաղաքակրթության նշանավոր էջերից է:

Կույսերի նահատակությունը հոգեկան ցցումներ է պատճառում Տրդատին, որ հոգեկան ծանր հիվանդություն է ստանում: Ժողովուրդը այդ հիվանդությունը բնորոշում էր խոզակերպությամբ և Տրդատին քանդակագործության մեջ պատկերում խոզակերպ: Թագավորի քույր Խոսրովիդուխտը մի քանի անգամ երազ է տեսնում, թե Տրդատին կարող է բուժել միայն բանտարկված Գրիգորը: Վերջինս ազատվելով նախ ամփոփում է կույսերի աճյունները, ապա 66 օր քարոզում քրիստոնեության մասին ու բժշկում Տրդատ թագավորին: Թագավորը և ողջ արքունիքը քրիստոնեա են դառնում և քրիստոնեությունը 301թ. հռչակվում է որպես պետական կրոն:

Հայաստանում քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն ազգապահպան մեծ նշանակություն ունեցավ: Դարեր շարունակ Հայ եկեղեցին եղել է ազգային միասնականության հոգևոր և գաղափարական գրավականը: Մեծ վերելք ապրեց հայկական ճարտարապետությունը: Նախաքրիստոնեական ճարտարապետության ոճերի համադրմամբ առաջացավ եկեղեցաշինությունը, ստեղծվեցին խաչքարեր: Հայ եկեղեցաշինության գոհարները հարստացրին համաշխարհային մշակույթի գանձարանը: Հայ եկեղեցու հովանու ներքո զարգացան հայ գիտությունն ու մշակույթը: Իսկ ականավոր գործիչների ժառանգությունը գումարվեց հազարամյակների խորքից եկող հայ մշակույթի ու գիտության արժեքներին: Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունումից հետո ավանդաբար պահպանվեցին հնուց եկող շատ տոներ ու ծեսեր: Դրանք դարձան ազգային եկեղեցական տոներ՝ Ամանոր, Տրնդեզ, Բարեկենդան, Վարդավառ, Խաղողօրհնեք և այլն: Հայաստանի տարածքում պահպանվել են բազմաթիվ հնագույն վանքեր և եկեղեցիներ: Նրանք այնտեղ ոչ միայն կրոնական արարողություններ էին կատարում, այլեւ գիտությամբ էին զբաղվում, թարգմանում ու ձեռագրեր էին գրում: Դրանք կրթական կենտրոններ էին: Հայաստանի գլխավոր վանքերից կանվանենք Էջմիածինը, Տաթևը, Հաղարծինը, Նորավանքը, Սևանավանքը, Գեղարդը, Սանահինը, Մարմաշենը:

Էջմիածինը քրիստոնեական առաջին տաճարն էր: Մինչ օրս այն Հայ առաքելական եկեղեցու հոգեւոր և վարչական կենտրոնն է, կաթողիկոսի նստավայրը: Իր իրավասության տակ ունի չորս պատրիարքություն.

1. Էջմիածնի կաթողիկոսություն
2. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը:
3. Երուսաղեմի պատրիարքություն
4. Ստամբուլի (Կոստանդնուպոլսի) պատրիարքություն

Կաթողիկոսը օրհնում է մյուռոնը, եկեղեցական նոր տոներն ու օրենքները: Նա հիմնում է թեմեր, որոնք այնուհետև գլխավորում են եպիսկոպոսները: Եպիսկոպոսները ձեռնադրում են քահանաներին, որոնք մատուցում են պատարագներ, կատարում են խորհուրդներ և ծեսեր:

Վիրքում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն կապված է Սուրբ Նինոյի (հայկական իրականության մեջ հայտնի է որպես Նունե) անվան հետ, ով փախչելով Հռոմի կայսր Դիոկղետիանոսի հալածանքներից հաստատվել էր Մեծ Հայքի թագավորությունում և ապա ճանապարհ բռնել դեպի Վիրք: Նրա հետ արևելք էին ժամանել նաև Հռիփսիմյանց կույսերը՝ Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը, ովքեր սակայն դահճաբար սպանվում են հեթանոս Տրդատ Մեծ Արշակունու կողմից: Նունեն իր քրիստոնյա քույրերից առանձնացել էր Վարագա լեռան մոտ և իր ճգնավոր կյանքը շարունակել Մցխեթ քաղաքի շրջակայքում: Ըստ ավանդության, Նունեի քարոզչությամբ և Հիսուս Քրիստոսի անունով կատարած հրաշագործությունների շնորհիվ վրաց արքա Միհրանը, արքունիքը և ապա՝ ամբողջ ժողովուրդը, ընդունում է քրիստոնեական կրոնը: Նախքան քրիստոնեության ընդունումը՝ Նունեն բուժել է վրաց Միհրան թագավորի հիվանդ զավակին՝ նրան խաչակնքելով, ապա բժշկել նաև հիվանդացած Նանա թագուհուն: Հաջորդիվ Վիրքի արքան գնում է որսորդության և շրջափակվում մութ մառախուղով, որից էլ դուրս է գալիս «Նունեի քարոզած Աստծուն» աղոթելու միջոցով: Վերադառնալով պալատ՝ արքան հրաման է արձակում՝ ընդունել Հիսուս Քրիստոսին որպես «բարձյալ աստծո որդի», իսկ Նունեին՝ վրաց եկեղեցու առաքյալ: Թագավորի գործակցությամբ Նունեն քանդել է տալիս Կուր գետի ափին՝ բլրի վրա վեր խոյացող Արամազդի արձանը և փոխարենը կանգնեցնում Քրիստոսի խաչի նշանը: Այսպիսով՝ 326 թվականին, Վրաստանը դառնում է աշխարհի երկրորդ քրիստոնյա երկիրը: Այս լուրը մեծ ցնծությամբ ընդունվում է Մեծ Հայքի թագավորությունում, որը 301 թվականին արդեն իսկ Գրիգոր Լուսավորչի ջանքերով ընդունել էր քրիստոնեությունը՝ առաջինն աշխարհում:

4-րդ դարում Վիրքը գտնվում էր աշխարհաքաղաքական երկու ուժերի՝ Հռոմեական կայսրության և Պարթևական տերության բախումների կիզակետում: Թերևս, ինչպես հայոց

տիրակալությունը, այնպես էլ Վիրքը, ցանկանում էր վարել չեզոք քաղաքականություն՝ բացառելով տարածաշրջանային ուժերի անուղղակի ազդեցությունը: 313 թվականի Միլանի հրովարտակով քրիստոնեությունը Հռոմում դառնում է թույլատրելի կրոն և ապա ընդունվում պետական մակարդակով: Այսպիսով, Վիրքն ու Մեծ Հայքը կրոնական հողի վրա ակամա թեքվում են դեպի արևմուտք և վերջիններիս հետագա ճակատագիրը Հռոմի հետ ընթանում է նույն ուղով: Այսպիսով, քրիստոնեության ընդունումը Վրաց թագավորությունում ունենում է նաև աշխարհաքաղաքական նշանակություն և կարևորապես ներազդում է միջազգային հարաբերությունների վրա:

Վիրքի թագավորությունը (Իբերիայի թագավորություն կամ Կովկասյան Իբերիա) մ.թ.ա. 4-3-րդ դարերի սահմանագծում Սև ծովի արևելյան ափին առաջացած վաղ ստրկատիրական պետություն էր, որը, ըստ վրացական ավանդազրույցի, հիմնադրվել է Քարթլիի տանուտեր Փառնավազի կողմից: Արտաշեսյանների թագավորության օրոք Վիրքում գերիշխել է հայկական ազդեցությունը, իսկ Տիգրան Մեծը վերջինս դարձրել է հարկատու և ենթակա թագավորություն: Մ.թ.ա. 66 թվականի Արտաշատի պայմանագրով Վիրքը (կամ վրաց թագավորությունը) դուրս է գալիս հայկական գերիշխանության և աշխարհակալության սահմաններից դուրս: Քրիստոնեական ուսմունքը Հայկական լեռնաշխարհում տարածվել էր դեռևս 1-ին դարում: Այս կրոնի էությունը կայանում էր նրանում, որ աշխարհաստեղծման և արարչության գործընթացները վերագրվում էր մեկ աստծո, որն էլ համարվում էր երկնքի և երկրի տիրակալը:

Քրիստոնեության կարևորագույն հրամանակարգն էր մեղքից, մահից և անեծքից մարդուն ազատելու նպատակով իրապես մարմնացած և մարդացած աստվածամարդու և նախահավիտենական աստծո որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին վարդապետությունը: Նախքան այդ, Վիրքի դավանանքը սահմանափակվում էր բնապաշտական, հոգեպաշտական և առարկայապաշտական հավատալիքներով, որոնք համախմբվում էին նախաքրիստոնեական վրացական հեթանոս դիցաբանության մեջ: Վրացական դիցարանի աստվածները հիմնականում փոխառություններ էին հեթանոս Հայաստանի պանթեոնից: Օրինակ՝ հին հայերի շրջանում երկրի արարիչ համարվող Արամազդը վրացական իրականության մեջ դարձել է Արմազի: Կային նաև տեղական հավատալիքներ:

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին հավաստել է, որ վրացիները, ինչպես և հայերը, ունեցել են Արամազդի և Վահագնի պաշտամունք: Այդ մասին հավաստում է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ զետեղված հետևյալ հատվածը.

> *«Նա հրաման ստացավ կուռքերը կործանել, ինչպես արել էր և ինքը, և կանգնեցնել պատվական խաչի նշանը, մինչև որ աստված հովիվ տա նրանց առաջնորդելու... Նունեն իսկույն կործանեց ամպրոպային Արամազդի արձանը, որ քաղաքից հեռու էր դրված և մեծ գետն անցնում էր երկուսի միջով:*
> *- Մովսես Խորենացի, «Պատմություն հայոց»»*

1-ին դարում Հայաստան են ժամանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, իսկ Վիրք՝ Անդրեաս առաքյալը: Վերջիններս հիմնում են առաջին քրիստոնեական համայնքները տարածաշրջանում, իսկ սուրբ Թադեոսը հիմնադրում է Հարավային Կովկասի առաջին քրիստոնեական եկեղեցին՝ Սուրբ Թադեի վանքը: Միաժամանակ, Անդրեասը դառնում է նաև վրացական եկեղեցու հիմնադիրը: 1-ին դարում քրիստոնեության տարածումից հետո այն պաշտոնապես ընդունվում է միայն 4-րդ դարում՝ Հռոմեական կայսրությունից Վիրք ժամանած Նունե առաքյալի ջանքերով:

Հռիփսիմյանց կույսերի հիշատակին կառուցված եկեղեցիները Հայաստանում և Վրաստանում

Իր հետ պատահածից դաս քաղելով Միհրանը վերադառնում է արքունիք և կատարում խոստումը: Վրաց մեծամեծերի ներկայությամբ և մասնակցությամբ տեղի է ունենում քրիստոնեության ընդունման արարողությունը: Վրաց ժողովրդի մկրտությունը տեղի է ունենում Կուր գետում: Առաջինը Նունեն մկրտում է Միհրան արքային և իր ընտանիքին, ապա՝ ժողովրդին: Քրիստոնեության ընդունումից հետո Միհրան արքան նամակ է հղում Կոստանդիանոս Ա Մեծին (ըստ հայկական աղբյուրի՝ Գրիգոր Լուսավորչին) և խնդրում հոգևորականներ առաքել Վիրք: Վրաց ժողովուրդը հոժարակամությամբ ընդունում է ավետարանը: Արքան հրաման է տալիս կործանել երկրի տարածքում գտնվող բոլոր կուռքերը, ինչպես արել էր և ինքը, և կանգնեցնել պատվական խաչի նշանը:

Վրաց ժողովրդի քրիստոնեացման միջադեպն ըստ Խորենացու

« Նրա վրա հարձակվեցին քաղաքի նախարարները, թե ում պիտի երկրպագենք կուռքերի փոխարեն: Նունեն ասաց, թե Քրիստոսի խաչի նշանին: (Խաչ) շինեցին, կանգնեցրին վայելուչ բլուրի վրա, քաղաքի արևելյան կողմում, որ նույնպես բաժանված էր ավելի փոքր գետով: Առավոտը ամբողջ բազմությունը նրան երկրպագեց, դարձյալ ամեն մեկն իր տան տանիքից: Բայց երբ բլուրը բարձրացան ու տեսան, որ մի տաշած փայտ է, ոչ ճարտար ձեռքի գործ, շատ շատերն արհամարհեցին՝ ասելով, թե այդպիսի փայտով նրանց անտառը լիքն է, և թողին հեռացան: Բայց բարերարն աստված նրանց գայթակղվելը տեսնելով, երկնքից ամպի սյուն իջեցրեց, լեռը լցվեց անուշահոտ բուրմունքով, և լսելի եղավ բազմաթիվ սաղմոսերգուների քաղցր ձայն, և լույս ծագեց խաչի նման, փայտյա խաչի ձևով ու չափով, որ կանգնեց նրա վրա՝ տասներկու աստղով: Ապա բոլորը

հավատացին ու երկրպագեցին, և այնուհետև նրանից բժշկական հրաշքներ էին կատարվում:»

Հաջորդիվ Նունեն քարոզչություն է իրականացնում նաև Քարթլիի մյուս մարզերում և գավառներում: Նրա ջանքերով Մցխեթում հիմնադրվում է Վրաստանի առաջին քրիստոնեական կառույցը՝ Սվետիցխովելին: Սվետիցխովելին հազարամյակներ շարունակ եղել է Վրաստանի գլխավոր տաճարը:

Նունեի վարդապետության և Վրաստանի քրիստոնեականացման մասին գրել են վաղ շրջանի բազմաթիվ եկեղեցական պատմիչներ, այդ թվում՝ Սոկրատ Սքոլաստիկոսը, Թեոդորետոս Կյուրացին, Սոզոմեն և այլք: Սոզոմենի «Եկեղեցական պատմություն» աշխատության 8-րդ գլուխը Հայաստանում և Վրաստանում քրիստոնեության տարածման մասին կարևորագույն գրավոր սկզբնաղյուրներից է:

Վրաստանում քրիստոնեության տարածման և ընդունման մասին հավաստի աղբյուրների դասին է պատկանում նաև Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը: Հայոց քերթողահայրը մանրամասն կերպով ներկայացրել է քրիստոնեության վկայաբանությունը, ինչպես նաև վրացի ժողովրդի քրիստոնեացումը:

«Իսկ երանելի Նունեն այնտեղից գնաց, որ Վրաստանի մյուս գավառներին էլ քարոզի իր անապական լեզվով շատ հասարակ կերպով շրջելով, առանց ավելորդությունների, աշխարհից և աշխարհային ամեն բանից հրաժարված, ավելի ճիշտ խոսելով՝ խաչվելով, կյանքը դարձնելով մահվան վարժեցնելու միջոց, աստծու խոսքին խոսքով վկա դառնալով և իր հոժարությամբ պսակվելով՝ ինչպես արյունով: Համարձակվում եմ ասել, որ նա առաքելուհի դարձած քարոզեց Կղարջքից սկսած, Ալանաց և Կասբից դռների մոտով մինչև մասքութների սահմանները, ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը:

- Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», Բ-ԶԶ»

Վրաստանի քրիստոնեացման մասին ընդհանրական պատմությունն առաջին անգամ գրի է առնվել միայն ուշ միջնադարում՝ 9-10-րդ դարերում: Վրաց միասնական պատմությունը գրելու պատասխանատվությունն իր վրա էր վերցրել Ղևոնդ Ռուիսեցին (Լեոնտի Մրովելի)՝ իր «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը» երկում (վրացական բնօրինակում՝ «Քարթլիս ցխովրեբա», թարգմանաբար՝ «Քարթլիի կյանքը»: Հայտնի է, որ վրացի պատմիչ Ղևոնդն իր աշխատությունը գրելու ժամանակ որպես սկզբնաղբյուր օգտագործել է նաև Խորենացու աշխատությունը:

Սուրբ Շողակաթ եկեղեցի

Սուրբ Գայանե եկեղեցի

Սուրբ Նունե եկեղեցի

Տարբեր հավատքները ժամանակակից Հայաստանում

Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը աշխարհիկ պետություն է, այսինքն՝ եկեղեցին անջատված է իշխանությունից: Քաղաքացիներն իրավունք ունեն դավանելու իրենց ընտրած կրոնը: Միաժամանակ, բնակչության 92–97% իրեն համարում է Հայ առաքելական եկեղեցու հետևորդ: Մնացած մի քանի տոկոսի մեջ մտնում են

- աթեիստներ - մոտ 1%,
- հեթանոսներ,
- ուղղափառներ, կաթոլիկներ, բողոքականներ, Եհովայի վկաներ և մոլոկաններ,;
- եզդիներն ու քրդերը շարֆանի կրոնի հետևորդներ են,
- իսլամ դավանում են ադրբեջանցիները, քրդերը և պարսիկները,
- հրեաներ,
- բուդդայականներ, ովքեր նախընտրում են իրենց մասին հրապարակավ չհայտարարել: Նրանց համայնքը փոքր է, և այն ներառում է հիմնականում մտավորականության ներկայացուցիչներին:

Հավելենք, որ Հայաստանից դուրս բնակվող սփյուռքի ներկայացուցիչները նույնպես մեծ մասամբ Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են:

Արտասահմանում բնակվում են նաև կաթոլիկ հայեր, նրանց թիվը մոտ 740 հազար է, նրանք հիմնականում ապրում են Վրաստանում, Սիրիայում, Իրաքում և Լիբանանում: Հետաքրքիր է, որ 1717 թվականին հայ վանական Մանուկ դի Պիետրոն վենետիկյան ծովածոցի Սուրբ Ղազար կղզում հիմնել է կաթոլիկ համայնք: Այժմ ցանկացած մարդ կարող է շրջայցի գնալ այնտեղ և տեսնել հայկական կաթոլիկ վանքը:

Հայության ճնշող մեծամասնության կյանքում կրոնը կարևոր տեղ է գրավում: Հայերին ավելի լավ հասկանալու համար հարկավոր է ծանոթանալ նրանց պատմությանը, այդ թվում՝ կրոնի պատմությանը:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Քրիստոնեության սկզբնավորումն ու տարածումը Հայաստանում գիտական մեծ կարևորություն ներկայացնող պատմամշակութային իրողություն է ոչ միայն մեզ, այլ նաև մյուս քրիստոնյա ժողովուրդների համար, որոնք այժմ իրենց որոշակի հետաքրքրությունն ու շահագրգռություններն ունեն: Կատարյալի որոնման հարցում, ինչպես և նոր կրոնի ընտրության մեջ հայերս նախապատվությունը սկզբից ևեթ տվեցինք այդ նորին ու առաջիններից մեկը եղանք: Մեր հնագույն ժայռագրերում և առասպելաբանության մեջ արևի նշանը նույնացվում էր հավերժության խորհրդանիշ Խաչի նշանի հետ, որի կրող նոր աստվածությունը՝ Հիսուսը, ընկալվեց իբրև Փրկիչ, ում հավատացինք անվերկբայորեն: Նրա երկինք փոխվելուց հետո առաջին քարոզիչները հասան մեր երկրի հարավային գավառները և թափանցեցին Հայաստան՝ սկսելով տարածել նրա ուսմունքը: Դա իրականացվեց երկու ուղղությամբ՝ Միջերկրական ծովի հարավարևելյան մասով դեպի Փոքր Ասիա և Հունաստան, մյուսը՝ Կապադովկիայով դեպի Հայաստանի հարավային նահանգներ: Սկզբում Թադեոս, իսկ քիչ ուշ Բարդուղիմեոս առաքյալները Սուրբ լեռանը հարող վայրերում իրականացրին դա, նահատակվեցին և իրենց մասունքները խառնեցին Հայոց հողին: Նորօրյա հետազոտողներից Թ. Փոսթաճեանն այն կարծիքին է, որ «Հայ և օտար պատմիչներու կողմէ վկայուած է այս զոյգ առաքեալներուն Հայաստանի մէջ քարոզութիւնները, ինչպէս նաև աւանդութեանց համաձայն անոնց կատարած գործերը ամէն ալ գերեզմանները մինչև այժմ գոյութիւն ունին Հայաստանին մէջ, և մեր Եկեղեցին արդար իրաւամբ անուանած է զիրենք «Առաջին Լուսաւորիչք Հայոց»:

Ըստ Մ. Օրմանյանի՝ մեր երկիր հասած Թադեոսը Ղեբեոս անվանվածն է եղել՝ տասներկուսից մեկը և ոչ յոթանասնից մեկը, ինչպես կարծում է Պատմահայրը: Վերջինիս գործունեությունը կապված է՝

1. Եդեսիայի Աբգար թագավորի գահակալության շրջանի հետ, որին Մ. Խորենացին հայոց թագավոր է համարում: Նրանից Սանատրուկը 91թ. ստացել է «Եդեսիո թագավոր» տիտղոսը և ինքը ևս կոչվել Աբգար: Պատմահայրը Եդեսիայի հիմնադիրն է համարում Աբգարին, որը Մծբինից այստեղ տեղափոխեց կուռքերի արձանները: Նա այդ արեց Հռոմի դեմ ապստամբելու համար: Մ. Խորենացին խոստովանում է նաև, որ իր պատմելիքն այս անձանց և պատմաշրջանի մասին չի համապատասխանում պատմության կարգին, այսինքն՝ պատմական փաստերը որոշ չափով հակասական են:

2. Ըստ ավանդության՝ Աբգարի քրոջ որդի Սանատրուկի դարձի ու զոհման, ինչպես և նրա դուստր Սանդուխտի սրբացման փաստի հետ:

Այս դեպքում մի կողմից պատմական շրջադարձային իրադարձությունների հետ, որոնք արտացոլված են նախ Լաբուբնիայի և ապա Եվսեբիոսի Երկերում, մյուս դեպքում՝ ազգային ավանդությունների հաղորդած տեղեկությունների հետ, որոնք փաստացի լրացնում են իրար:

Աբգարի և Սանդուխտի դարձի պատմությունները թեև միասին են հանդես գալիս, բայց առանձին ստեղծագործություններ են:

Հայոց մեջ քրիստոնեության տարածումը կապված է Աբգարի թղթի հետ: Այն, ըստ ավանդության, Փիլիպոսն ու Անդրեասը ներկայացնում են Հիսուսին, իսկ Թովմասը Տիրոջ հանձնարարությամբ գրում է պատասխանը: Ըստ Աբգարի պահանջի՝ նամակատարը՝ Հովհաննեսը, որ պատկերահան էր, պետք է կատարեր Հիսուսի դիմապատկերը և բերեր, եթե նա չհամաձայներ գալ Եդեսիա: Հիսուսը չի կարողանում գալ և իր պատկերը նկարել փորձող նամակաբերին է տալիս ցանկալի դաստառակը՝ դնելով այն դեմքին ու հրաշալի պատկերը տպված վիճակում հանձնելով նրան: Առաջինը մեզանում Աբգարն է հավատում Տիրոջը. «լցեալ անպատմելի խնդութեամբ», երբ իր նամակատարը հանձնում է նրան անձեռակերտ նկարը: Քիչ ավելի ուշ Եդեսիա է գալիս Թադեոսը՝ Թովմաս առաքյալի հանձնարարությամբ: Այդ փաստը հաստատում են ինչպես վաղ շրջանի, այնպես էլ հետագա շատ պատմիչներ: Նա սկզբում հանգրվանում է Տուբիա Բագրատունու տանը: Նախ այս ընտանիքի մարդիկ են հավատում Քրիստոսին, իսկ հետո քարոզիչը սկսում է բազում սքանչելիքներ անել քաղաքում, որի շնորհիվ նրա համվաբը տարածվում է ամենուր: Այս մասին լսում է Աբգարը և հասկանում, որ դա սպասված մարդն է ու կանչում է իր մոտ. «Եւ լուեալ թագաւորին Աբգարու զսրբոյ առաքելոյն Թադէոսէ, կարծելով իմացաւ, թէ նա է, որ առաքեցաւ ի Քրիստոսէ»:

Ասորեական վարք-վկայաբանությունները խոսում են Ադդայի մասին: Դա իր արտացոլումն է գտել «Ադդայի վարդապետությունը» երկում, ըստ որի՝ քարոզելու համար Եդեսիա է գալիս հիշյալ առաքյալը: Այս մասին իմանում է Ադիաբենեի Ներսե թագավորը և նամակով դիմում է Աբգարին՝ խնդրելով վերջինիս իր մոտ ուղարկել քարոզելու: Աբգարն ուղարկում է նրան, իսկ առաքյալն իր փոխարեն թողնում է Ագգային: Այդ առաքյալն էլ դառնում է միջագետքյան մի շարք ժողովուրդների, այդ թվում և հայերի քարոզիչը:

Թադեոսի մասին վկայաբանության մեջ նա բուժում է Աբգարին, և բազում եդեսիացնիներ ևս հավատում են ու արքայի հետ արժանանում մկրտվելու բախտին: Թադեոսի պահանջով փակվում են մեհյանները, տեղում Ս. Աստվածածին եկեղեցին է կառուցվում, և Աբգարը դնել է տալիս Հիսուսի պատկերը: Բարձրադիր բլրի վրա ամրացված էր ոսկեզարդ տախտակ՝ հետևյալ գրությամբ, «Քրիստոս Աստուած, որ ի քեզ յուսայ՝ ո՛չ վրիպի ի յուսոյն»: Առաքյալը բժշկում է նաև «զԱբդիու՝ որդի Աբգարայ ի չար ցաւոց»: Եդեսիայում Թադեոսն ավարտելով իր գործը՝ մեկնում է Սանատրուկի մոտ, որը Աբգարի քրոջ որդին էր: Արտազ գավառի Շավարշան ավանի ամառային իր ապարանքում էր

արքան, երբ առաքյալն սկսում է քարոզել, և Սանատրուկը հավատում է ու մկրտվում: Հավատում են շատ նախարարներ, Սանատրուկի դուստրը և այլ մարդիկ: «Յորժամ եկեալ դուստր թագաւորին, որում անուն էր Սանդուխտ, որ էր ի տիոց տղայ, գեղեցիկ տեսլեամբ և վայելուչ երեսօք...,-նշվում է վկայաբանության մեջ, ու Թադեոսը,- ոչ թողոյր զնա զտիւ և զգիշեր և այնպէս միացեալ բեւեռէր ի սէրն Քրիստոսի՝ Աստծոյ մերոյ»: Առաքյալի և օրիորդի սերը, որ երկնային զգացմունքի դրսևորում էր, գնալով առավել խորանում է: Սանդուխտն ամբողջովին նվիրվում է Տիրոջը, և երկնային զորություն է իջնում նրա վրա: Իսկ առաքյալին Տերը խրախուսում է. «Եւ երեւեցեալ փրկչին ասէ. «Պինդ կաց Թադէոս, զի ես ընդ քեզ եմ»:

Սանատրուկը, սակայն, վախենալով կրկին հեթանոսացած իշխաններից, հրաժարվում է քրիստոնեությունից և հալածանք սկսում քրիստոնյաների դեմ: Իմանալով դստեր հավատքի մեջ անսասան լինելու մասին՝ փորձում է նրան հեռացնել քրիստոնեությունից, ամուսնացնել ու նրա համար երկրային երջանկություն ապահովել: Սակայն ապագա սրբուհին իրեն արդեն նվիրել էր երկնային արքայությանը և չի զիջում հոր թախանձանքներին: Հայրը ասում է«Մո՛տ եկ, դուստր ի՛մ,- աղջիկը չի նայում հոր կողմը: Հայրն ասում է, - Ուրացա՞ր զիս և սիրեցէ՞ր մոլորեցուցիչն»: Սանդուխտը չի ուզում լսել հորը: Իսկ արքան սաստիկ բարկացած ասում է, «Եթե ոչ դառնաս յամառ մտաց քոյ.... չար մահուամբ կորուստի զքեզ և զնա»: Դրան հետևում են դաժան բանտարկություն և հաշվեհարդար երկուսի համար: Սանատրուկը հարցնում է. «Դու՞ ես Թադէոս, և ասէ՝ ես եմ, և ասէ. «Զիարդ գողացար զմիտս չքնաղ կուսին՝ դստերն իմոյ, եւ գրաւեցէր զնա ի քեզ.... արարէր զնա որպէս զմի յաղքատաց»: Վերջինս պատասխանում է, թե ինքը նրան փրկել է կռամոլ դևերից ու նրա միտքը գամել է Հիսուսի անվանը: Սանատրուկը ֆիզիկական տանջանքների է ենթարկում երկուսին էլ, և դրանով ցույց են տրվում ա) բռնացողների դաժանությունը և բ) երկնային թագավորության նվիրյալների տոկունությունը: Նրանց պայքարն ուղեկցվում է կտտանքներին ի պատասխան դրսևորվող համառ դիմադրությամբ: Դա մարմինը ուրանալու, ցավերը արհամարհելու մի ոգեկեղեք ընթացք է, որին միջամտում են Աստված և նրա հրեշտակները: Այդ հրաշքը հենց ապահովում է սրբուհուն, որ նա երկնային թագավորության ամենաբարձր տեղում հանգրվանելու իրավունք վաստակի: Իրենց հետևած քրիստոնյաներին քարոզիչները և վկաները պաշտպանում են ու քաջալերում, որ նրանք չընկճվեն, չզիջեն և երկնային թագավորությունից չզրկվեն: Վրա է հասնում նահատակության պահը, երբ վկայուհին ասում է. «Յիշեա՛ զաղախին քո, Տէ՛ր: Եվ նույն ժամոյն պատանի ոմն եհար զկուրծս երանելոյ կուսին»: Տարածվում է նրա մարմնի բույրը, և պայծառ լույս է ծագում նահատակի վրա: Թադեոսը նրա մարմինը թաքցնում է անհայտ մի տեղ ու աներևույթ դարձնում շրջակայքը: Խղճալով Զեմենտ անունով մի նորադարձի՝ նա կենդանացնում է սրան: Նահատակվում է նաև առաքյալը, ու նրա մարմինն էլ փակվում է ժայռի մեջ (նախաքրիստոնեական աշխարհատեսության մեջ սա հերոսի՝ քարանձավի կամ ժայռի մեջ արգելափակվելու մոտիվի

դրսևորում է): Հետևում է նահատակների գերեզմանների սրբացումը: Մասունքներն աստիճանաբար գտնվում են, պաշտամունքի ու սրբացման արժանանում:

Ըստ գործողությունների՝ Աբգարի, Թադեոսի և Սանդուխտի մասին վարք-վկայաբանությունները պարունակում են հետևյալ կառուցվածքային դրվագները.

1. Աբգարի թուղթը և դարձի գալը (այդ ժամանակից սկսվում է նաև սուրբ մասունքների ձեռքբերումը):
2. Աբգարի մերձավոր շրջապատի և քեռորդի Սանատրուկի դարձը.
3. Սանդուխտի դարձը:
4. Սանատրուկի զոհումը, հալածանքները քրիստոնեության դեմ, իր դստեր և Թադեոսի նահատակությունը:
5. Սրբերի գերեզմանների հրաշքով հայտնաբերվելը և մասունքների տարածումն ու նրանց տեղում վկայարանների կառուցումը:

Մովսես Խորենացին, հենվելով Լաբուբնայի (նաև՝ Ղեբուբնա, Լաբուբնիա), Եվս. Կեսարացու, Բարդածանի, Հովս. Փլավիոսի և այլոց տեղեկությունների վրա, բերում է մի շարք նոր տվյալներ այդ մասին ու նաև Հիսուսին ուղղված Աբգարի թուղթը: Ըստ ավանդության՝ մեզանում առաջին հավատացյալները եղել են Եդեսիայի հայկական իշխանության և այն ժամանակվա Մեծ Հայքի թագավորներ Աբգար 5-րդն ու նրա քրոջ որդի Սանատրուկը: Իրենց քարոզների, գործած հրաշքների և նահատակության արդյունքում նրանք սրբերի գերեզմանների վրա Արտազ գավառում կառուցվում են առաջին մատուռները: Այստեղ արդեն կարելի է խոսել և նախքան Գր. Լուսավորիչը գոյություն ունեցած Հայոց եկեղեցու և հայ հայրապետների փաստական գոյության ու գործունեության մասին: Հիշատակվում են ազգությամբ հրեա Զաքարիան (68-72) և հետագա հայ՝ Ջեմենտոս (72-76), Ատրներսեհ (76-92), Մուշե (93-123), Շահե (125-150) և այլ հայրապետներ: Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, հույն, հռոմեացի, ասորի ժամանակագիրները հաստատում են այս իրադարձությունների փաստական ճշմարտացիությունը: Ավելին, Հ. Մանանդյանը պնդում է, որ Հայոց Սանատրուկ արքան գործել է 1-ին դարի վերջին, երբ նվաճել է Եդեսիան՝ գահակալելով 75-110 թթ. Տրայանոս կայսեր օրոք և ոչ ավելի ուշ: Այս հերոսների ու սրբերի անուններով, նրանց նահատակության թեմաներով ինչպես Միջնադարում, այնպես էլ ավելի ուշ գրվել են բարձրարվեստ ստեղծագործություններ, որոնցից մեկն էլ Ղևոնդ Ալիշանի « Շուշան Շաւարշան» պոեմն է՝ նվիրված Ս. Սանդուխտի կյանքի և նահատակության հուզիչ պատմությանը: Նվիրյալ այս անձինք դրել են Հայոց Առաքելական Ս. Եկեղեցու հիմքը՝ նախադրյալներ ստեղծելով Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի հետագա գործունեության համար:

Հերոսների իրական-պատմական ու նրանց գործերի վավերական լինելու խնդիրներն աղբյուրներում կասկածի տեղիք չեն տալիս՝ բացի որոշ մասնակի տարաձայնություններից: Առաքելականության հարցում, ինչպես Թ. Փոսթաճեանն է նշում. «Նոյնիսկ Հռովմ իր Եկեղեցու

Առաքելականութիւնը ապացուցելու համար չունի աւելի տուեալներ, քան ան տուեալները զորս ունի Հայոց Եկեղեցին»:

Սկզբնաղբյուրների ընդգրկման տարածաժամանակային և օգտագործված ժանրային ձևի ու բովանդակության, այսինքն՝ երկի գեղարվեստականության հարցերն (ժանր, տեքստ, հորինման ժամանակ և այլն) առաջնային են: Այո՛, ակամա ծագում է պատմական անձնավորությունների իրական լինել-չլինելու և վարք-վկայաբանություններում հարցերը: Այդ դժվարին խնդիրները ծառացել են բոլոր ուսումնասիրողների առջև ու բոլոր ժամանակներում: Դրանք բանասիրական-աղբյուրագիտական առումով մեզ ներկայանում են որպես համախումբ: Հանդես են գալիս գրական տարբեր ժանրեր, որոնք փոխլրացնում են միմյանց՝ առաջադրելով համաժամանակյա և տարժամանակյա բազում հիմնահարցեր, որոնցից մեկն էլ հորինման ժամանակին վերաբերում:

Տարբեր աղբյուրների շնորհիվ մեզ են հասել Լաբուբնա դպրի՝ Եդեսիայի վեստական տեղեկությունները, նրանց վերաբերող վարք-վկայաբանությունները և այլ կարգի նյութեր, որոնք լրացվել են Եվսեբիոսի, Մ. Խորենացու և շատ այլ հեղինակների կողմից: Մեզ ավանդված սկզբնաղբյուրները հետևյալներն են.

1. Աբգարի վարքը՝ թղթերով հանդերձ
2. Սանատրուկի մասին նյութը
3. ա. «Վկայաբանութիւն եւ գիւտ Ս. Թադէի Առաքելոյն եւ որոյ ընդ նմա»

   բ. «Վկայաբանութիւն եւ գիւտ Ս. Թադէի Առաքելոյն եւ Սանդխտի կուսի»:

4. Սանդուխտ կույսի մասին շարականը:

5. Թադեոս Առաքյալին վերագրվող Կանոնները:

Օտարազգի և հայ պատմիչների հաղորդած տեղեկություններին ամբողջացնում են պատկերացումը դեպքերի ու դեմքերի մասին: Իհարկե, պատմիչների հաղորդած մանրամասները մասնակիորեն են տարբերվում միմյանցից, և դա ընդհանուր պատկերացման մեջ էական նշանակություն չունի: Շարքի առաջին երկը՝ Աբգարի վարքը, ձևավորվել է ասորական միջավայրում: Այս ընթացքում ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տարբերակներն ազդել են հայկական աղբյուրների վրա ևս, իսկ 5-րդ դարում «հայացվել»: Դա վերաբերում է Աբգարի կյանքին, Հիսուսին ուղղված են 1-ին դ. կեսերին և 2-րդ դարում, երբ Օսրոենեն հայկական հպատակություն ուներ: Քրիստոնեական դարձի պատմության մեջ Աբգարը թագավոր է անվանված: Նրան համարում էին և այժմ էլ համարում են հայոց արքա ու Տիրոջ հետ առնչված առաջին ներկայացուցիչը մեզանում: Այս նյութը տեղայնացվել է մինչև 5-րդ դարը: Հերոսները և նրանց մասին ասվածն անվիճելի է համարվել Աբգար-Սանատրուկ կապի ու բարեկամության պատճառով: Հայոց Արշակունի թագավորների խնամիությունը Աբգարի հետ ցույց է տալիս, որ իսկապես մորեղբայրը ևս գործում է հայկական միջավայրում: Թադեոսի առաքելական գործունեության մասին պատմող նյութի տեղական-ոչ տեղական լինելու հարցը ևս կարևոր է: Աբգարի մասին պատմականացված

վարքը և Թադեոսի մասին վկայաբանակն զրույցը պայմանականորեն կանվանեմ տեղայնացված զրուցապատումներ, որոնք փոխ են առնված օտար աղբյուրներից մինչև 5-րդ դ.: Իսկ բուն տեղական զրույցները հիմնականում վերաբերում են հայոց արքա Սանատրուկին և նրա դստերը՝ Սանդուխտին: Այստեղ բուն հայկական նյութի հետ: Սանդուխտի վկայաբանությունը 1-ին դ. դեպքերի հիման վրա 2-րդ դ. ստեղծված և արդեն 5-րդ դ. գրավոր տեքստի վերածված մի երկ է: 5-րդ դ. խմբագրության մասին Մ. Խորենացին ասում է, որ այն գրել են ուրիշները՝ չկոնկրետացնելով իր խոսքը: Ահա՛, այդ մեկ-երկու վկայաբանությունների շնորհիվ է, որ Հայոց Եկեղեցին համարվում է Առաքելական: Այս փաստը շեշտվեց նաև Հռոմի Պապ Ֆրանցիսկոց Առաջինի հայաստանյան պատմական այցելության ժամանակ:

Ասվածից կարելի է եզրակացնել.

ա) Վարք-վկայավանությունների ժանրային առանձնահատկություններով պայմանավորված բովանդակային որոշ էական մանրամասներ, ապա պատմագիտական առանձին հիմնահարցերում ակնհայտ է հայերի դերը վաղքրիստոնեական համայնքների ստեղծման ու Առաջին Եկեղեցու հիմնման մեջ:

բ) Կա և պատմական անձանց ու վարք-վկայաբանությունների հերոսների՝ տարբեր ժամանակներում ապրած և գործած լինելու հանգամանքը, ասյինքն՝ անաքրոնիզմի հարցը, ինչը բնորոշ է նմանատիպ երկերին ընդհանրապես, և հայկական վկայաբանությունները բացառություն չեն կազմում: Ե՛վ պատմական սկզբնաղբյուրները, և՛ վարք-վկայաբանությունները որոշակի կարևոր տեղեկություններ են տրամադրում քրիստոնեության տարածման ու ընդունման վաղ շրջանի մասին, որով վկայաբանական տեքստերը բնավ էլ զուրկ չեն կարևոր փաստական նյութի առկայությունից և չպիտի դիտվեն երկրորդական:

գ) Վարք-վկայաբանական երկերն ու նրանց անհայտ հեղինակները պատմական թանկ մասունքներ են փրկել կորստից: Նախնական ժամանակների, մանավանդ քրիստոներության վաղագույն շրջանի մասին քիչ բան հայտնի կլինի, եթե չպահպանվեին տեղական զրուցապատումներն իրական դեպքերի մասին:

դ) Այսօր վստահաբար կարող եմ խոսել Աբգարի վարքի, Թադեոս առաքյալի և Սանդուխտի վկայաբանությունների հայկական խմբագրությունների նախնական գոյության մասին:

ե) Ընդհանուր վարքագրության մեջ քրիստոնյաների դեմ հարուցած օտարազգի թե տեղական իշխանների «հալածանքների առթիվ զոհ գնացած մարտիրոսների հիշատակը հավերժանալու և եկող սերունդների մեջ նրանց օրինակը կենդանի պահելու» միտումը և ներշնչանքի աղբյուր լինելը վկայաբանություններում կարևորվել են և ունեն ուսուցողական նշանակություն:

զ) Վաղես կայսեր ժամանակներից ընդհանրական եկեղեցու մեջ առանձին եկեղեցիներ պարտադրում են մյուսներին, որպեսզի բոլորի վրա տարածվի Կոստանդնուպոլսի պատրիարքության գերիշխանությունը: Պայքարը մի կողմից ուղղված էր Արևելյան եկեղեցիների,

ինչպես Եդեսիայի ասորական, այդ թվում նաև հայ եկեղեցու իրավունքների դեմ: Այդ պատճառով տեղական զրույցները սեփական իրավունքները պաշտպանելու ձգտումի մասին են, որով նրանք հաստատում են իրենց վաղեմությունը և իրավունքները:

է) Առաքելականությունը Հայոց Եկեղեցին յուրացրել է վաղնջական ժամանակներից և պաշտոնապես գործածում է առ այսօր: Դա մի կողմից հաստատում է նրա նախնական ծագումը և մյուս կողմից հավաստում է նրա ուղղակի և ինքնուրույն սկզբնավորությունը՝ առանց ուրիշ հնագույն եկեղեցու հետ առնչելու:

Այսպիսով, ուսումնասիրելով քրիստոնեության մուտքը և դրա տարածման նախադրյալները, հստակ կարող եմ նշել, որ այն ուսուցանելու տարբեր մեթոդներ կարող ենք օգտագործել սակայն աշակերտները պետք է իմանան ինչպիսի նշանակություն է ունեցել մեր պատմության մեջ քրիստոնեության մուտքը, նրա տարածման նախադրյալները: Եվ իհարկե առհասարակ հայության համար ինչպիսի նշանակություն ունի քրիստոնեությունը:

Այս թեմայի ուսումնասիրությունը բավականին մեծ նշանակություն ունի և շատ կարևոր է քրիստոնեական հավատքին վերաբերող բոլոր փաստերի և աղբյուրների ուսումնասիրությունը,քանի որ այս կերպ կարելի է աշակերտների մոտ առաջացնել հավատ և սեր Աստծո նկատմամբ:Արդի ժամանակաշրջանում անհրաժեշտություն է առաջացել մեկ անգամ ևս խոսել ու քննարկել քրիստոնեության և հոգևոր արժեքներին վերաբերող թեմաներ՝ ձևավորելով հոգևոր արժեհամակարգ:

Քրիստոնեությունը հայոց պատմության մեջ եղել է առանցքային մի շրջան,որի շնորհիվ մեր երկիրը ձեռք է բերել անկախություն:Հայաստանը որպես միակ երկիր,որը ընդունել է քրիստոնեությունը դարձել է եզակի և անկախ է եղել օտար հավատքից:

Եղած փաստերը հիմք ընդունելով կարող եմ ասել, որ պարտավոր ենք ուսումնասիրել քրիստոնեության ընդունման, տարածման, պետական կրոն հռչակման պատմական նախադրյալների ու նշանակության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դիտարկումների արդյունքների ամփոփմամբ կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություններ, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթները:

- Մեր օրերում աշխարհը մոռացել է Քրիստոնեության և հոգևորի մասին: Այսուհետ շատ կարևոր է սովորեցնել ապագա սերնդին, քրիստոնեության մուտքի և տարածման նախադրայալները, որոնք աշակերտների մոտ կառաջացնեն հավատ և սեր Աստծու նկատմամբ: Այս թեմայի ուսուցումը շատ կարևոր է հայկական դպրոցներում:
- Հայաստանում քրիստոնեությունը հռչակվել է որպես պետական կրոն 301 թվականին: Այդ գործում կարևոր դեր է խաղացել Գրիգոր Լուսավորիչը, որը հետագայում դարձավ հայ առաջին կաթողիկոսը (326-330), և Տրդատ 3-րդ Մեծը (287-330), որը մինչ իր քրիստոնեություն ընդունելը համարվում էր քրիտոնյաների մահացու թշնամին:
- Այսպիսով ուսումնասիրելով քրիստոնեության մուտքը և դրա տարածման նախադրյալները: Հստակ կարող եմ նշել, որ այն ուսուցանելու տարբեր մեթոդներ կարող են օգտագործել սակայն աշակերտները պետք է իմանան ինչպիսի նշանակություն է ունեցել մեր պատմության մեջ քրիստոնեության մուտքը, նրա տարածման նախադրյալները: Եվ իհարկե առհասարակ հայության համար ինչպիսի նշանակություն ունի քրիստոնեությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թ. Փոսթաճեան, Հայաստանեայց Եկեղեցին եւ միւսները, Լոս Անճելես, 2022, էջ 144:
2. Մ. Օրմանյան, Ազվապատում,հ.Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 7-11:
3. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 7:
4. Մաղաքիա Օրմանյան «Ազգապատում»
5. Մովսես Խորենացի «Պատմություն Հայոց»
6. Տեր-Մինասեան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ս. Էջմիածին, (1908) 2013, էջ 19-20:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Նախագծային աշխատանքի ղեկավար՝	Դանիելյան Մերի	
Աշակերտներ՝	Խաչյան Համլետ	7-րդ «Բ» դասարան
	Թումասյան Տիգրան	7-րդ «Բ» դասարան
	Օսիպով Գոռ	7-րդ «Բ» դասարան
	Բաբայան Նանե	7-րդ «Բ» դասարան